

Լրամշակված է՝ «Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի գիտական խորհրդի 2019թ.-ի դեկտեմբերի 26-ի նիստում Գիտական խորհրդի նախագահ՝ \_\_\_\_\_ Ե. Սերոբյան

Լրամշակված է՝ «Գյումրու Մ. Նալբանդյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտ» ՊՈԱԿ-ի գիտական խորհրդի 2014թ.-ի սեպտեմբերի 23-ի նիստում Գիտական խորհրդի նախագահ՝ \_\_\_\_\_ Վ. Գրիգորյան

Հիմք՝ «Գյումրու Մ. Նալբանդյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտ» ՊՈԱԿ-ի գիտական խորհրդի 2012 թ.-ի փետրվարի 16-ի նիստում հաստատված ԳՊՄԻ ՊՈԱԿ-ի գիտահետազոտական և գիտամեթոդական աշխատանքները խթանելու դասախոսի հավելավճարի տարբերակված համակարգ Գիտական խորհրդի նախագահ՝ \_\_\_\_\_ Վ. Գրիգորյան

### ԸՆԹԱՑԱԿԱՐԳ

## «ՇԻՐԱԿԻ Մ. ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՄԵԹՈԴԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԽԹԱՆՄԱՆ

«Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամը (այսուհետ՝ ՇՊՀ) աշխատակիցների գիտահետազոտական և գիտամեթոդական գործունեության խթանման համար հավելավճարի տրամադրումը իրականացնում է սույն ընթացակարգով:

1. Յուրաքանչյուր տարեվերջին առանձին աշխատակիցների գիտահետազոտական և գիտամեթոդական գործունեության արդյունքները՝ համապատասխան հիմքերով, առանձին փաթեթներով ամբիոնի վարիչի կողմից ներկայացվում է Գիտական քաղաքականության, որակի ապահովման և կառավարման կենտրոն:

2. Գիտական քաղաքականության, որակի ապահովման և կառավարման կենտրոնը ներկայացված փաթեթների ուսումնասիրությունից հետո հաշվարկում է աշխատակիցների կողմից ծավալված գիտահետազոտական և գիտամեթոդական գործունեության արդյունքները՝ ըստ կից Հավելվածի:

3. Հաշվարկումից հետո արդյունքները ներկայացվում են ամբիոններին՝ առաջարկելով սեղմ ժամկետում տեղեկացնել հնարավոր անճշտությունների մասին:

4. Հավելավճարի տրամադրման վերջնական ցուցակը Գիտական քաղաքականության, որակի ապահովման և կառավարման կենտրոնի կողմից ներկայացվում է ռեկտորի հրամանով ձևավորված հանձնաժողովին, որն էլ վերջնական հաստատում է հավելավճարի տրամադրման վերջնական ցուցակը:

5. Վիճարկելի հարցերը քննարկվում է հանձնաժողովի կողմից և կայացվում համապատասխան որոշում:

6. Հանձնաժողովի կայացրած որոշման հիման վրա ռեկտորը տալիս է աշխատակիցների հավելավճարի վճարման վերաբերյալ հրաման:

7. Կատարված հաշվարկների արդյունքում ստացված գումարը չի ներառում եկամտային հարկը և սոցիալական վճարի հետպահումները:

Հավելված

| Գործունեության տեսակը |                                                                                                                                                                                        | Գումարի չափը (ՀՀ դրամ) |
|-----------------------|----------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|------------------------|
| 1                     | Միջազգային վարկանիշավորում ունեցող կամ Scopus կամ Web of Science շտեմարաններում ընդգրկված գիտական ամսագրում հոդված                                                                     | 50 000                 |
| 2                     | ՌԴ ԲՈՀ-ի ցուցակում ընդգրկված գիտական ամսագրերում և ժողովածուներում հոդված                                                                                                              | 35 000                 |
| 3                     | ՇՊՀ-ի Գիտական տեղեկագրում հրատարակված գիտական հոդված                                                                                                                                   | 25 000                 |
| 4                     | ՀՀ ԲՈԿ-ի ցուցակում ընդգրկված գիտական ամսագրերում և ժողովածուներում հոդված                                                                                                              | 20 000                 |
| 5                     | РИИЦ համակարգում ընդգրկված գիտական ամսագրերում և ժողովածուներում հոդված                                                                                                                | 20 000                 |
| 6                     | Միջազգային գիտաժողովի աշխատանքների ժողովածուում հրատարակված գիտական հոդված                                                                                                             | 20 000                 |
| 7                     | Գրախոսվող նեղ մասնագիտական ամսագրերում հոդված                                                                                                                                          | 15 000                 |
| 8                     | Պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների գիտական խորհուրդների կամ ՀՀ ԳԱԱ ինստիտուտների խորհուրդների կողմից հաստատված հանրապետական գիտաժողովի աշխատանքների ժողովածուում հոդված | 10 000                 |
| 9                     | Պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների գիտական/ֆակուլտետային խորհուրդների կամ ՀՀ ԳԱԱ ինստիտուտների խորհուրդների կողմից թույլատրված գիտամեթոդական աշխատանք                   | 1 տպ. մամուլ- 2000     |
| 10                    | Պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների գիտական/ֆակուլտետային խորհուրդների կամ ՀՀ ԳԱԱ ինստիտուտների խորհուրդների կողմից թույլատրված գիտական մենագրություն                    | 1 տպ. մամուլ- 3000     |
| 11                    | Գիտական գյուտի պետական հեղինակային վկայագիր                                                                                                                                            | 20 000                 |
| 12                    | Միջազգային մասնագիտական կազմակերպության անդամ                                                                                                                                          | 20 000                 |
| 13                    | Միջազգային պաշտոնական կառույցների կողմից կազմակերպված ցուցահանդեսի ծրագրում ընդգրկվածություն և մասնակցություն (կերպարվեստ, քանդակագործություն, երաժշտական գործ)                        | 20 000                 |
| 14                    | Մենագրությունների, ուսումնամեթոդական աշխատանքների, դասագրքերի, թեկնածուական և դոկտորական աշխատանքների գրախոսում                                                                        | 1 գրախոսումը - 5000    |
| 15                    | Գիտական հոդվածների գրախոսում                                                                                                                                                           | 1 գրախոսումը - 2000    |